զձայն վայոցն։ Եւ յոլովք ի զօրացն պարսից և ի գլխաւորաց նոցա փախստեալ գնացին յո՛ և կամեցան, բայց ինչք, տունք, ընտանիք և զաւակք նոցա գերեվարեցան և աւար գնացին։ Եւ զխանն Հուսէյին՝ ըմբռնեալ պահեցին քանի մի աւուրս, և ապա եռուն ի ձեռն Իբրահիմ ալին եղբօր յառաջ ասացեալ մէլիք Փէյքարին, զոր սպան փոխանակ հօր և եղբօր իւրոյ։ Իսկ Հայ ազգ Քրիստոնեայքն, թէ բնակիչք քաղաքին, և թէ այլ գիւղօրէից, ո՛չ այնքան վնասեցան կոտորմամբ, այլ սակաւ ոմանք, զի խնայեցին ի նոսա ողորմութեամբն Քրիստոսի, այլ աւարումն ընչից ո՛չ սակաւ եղեւ. նաեւ գերեվարութիւն զաւակաց և որդւոց նոցա ո՛չ եւս եղեւ։ Քանզի գիտել եւս արժան է յաղագս փարթամութեան քաղաքիս այսորիկ Շամախու, զի ի մեծէ Շահապասէն զոր էառ զսա ի ձեռաց օսմանցոց ի ՌԾԵ թուին մինչեւ ի ՌՃՂ թիւն, շուղ մի ոչ էր ստերիւրեալ յայսմանէ. և զի էր պանտար կասպիական ծովուն և յամենայն կողմանց վաճառականացն տեղիք բնակութեան, և վաճառի, և շահաւէտութեան ի Հնդկաց, ի Հռոմոց, ի Ջուղայու, ի Ռուսաց, և յամենայն երկրէ, և այսպէս լի էր ամենայն ստացուածովք և գանձիւք, վասնորոյ ագահ և անագորոյն ազգն այն. մանաւանդ թէ իշաբարոյքն կողոպտեալ առ հասարակ մերկացուցին, որպէս այր մի անկեալ ի ձեռս անաստուած աւազակաց, և ժողովեալ զամենայն կերպակերպ ինչս՝ ոսկիս և արծաթս՝ բերեալ արտաքոյ քաղաքին կոտորեցին ուրոյն ուրոյն, և բաժանեալ յինքեանս բարձեալ տարան ի տեղիս իւրեանց։ Եւ այնքան տգէտք էին պիղծքն այնոքիկ, զի ոսկի մի տային հացի միոյ և սեխի միոյ։ Եւ այսպէս եղեւ առումն ամենափարթամ մայրաքաղաքին Շամախու։ Եւ զկնի առման քաղաքիս, գլխաւորքն Գանջայու, և Երեւանու ազգ արարին և բոլոք բարձին առ արքայ և ինքեանք գրոհ տուեալ ամենայն զօրօք իւրեանց եկեալ հասին ի Պարտաւ քաղաք Աղուանից, առ ափն Կուր գետոյն։

43 . . , Եւ յանցանել ձմեռնային սաստկասառոյց գետին, և մերձենալ գարնանային քաղցրահոտ շնչմանն, որ մեզ դառն երեւեցաւ, յաւուրս մարտի ամսոյն մերձ առ մեծի պասեքի Տեառնէն, դարձեալ վառեցան ի չար խորհուրդս իւրեանց, կրկին և